



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՊՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻԱՏ ԵՅԹԵԻՏԱՍԵՐՈՐԳ

29 ՅՈՒՆԻՍ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1871 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԷ

29 ՅՈՒՆՎԱՐ 1874

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶՍՆ ՊԱՏՐԻԱՐԺ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Գ. ՕՏԵԱՆ ԷՖ.

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Ատենագրութիւնք նախընթաց նիստերուն :
- 2° Վաւերացում ընտրութեանց նորընտիր երեսփոխանաց :
- 3° Ընտրութիւն Գ. Ատենապետի եւ Գ. Ատենադպրի Ընդհ. Ժողովին :
- 4° Վերաքննութիւն Սահմ. — Ընդհ. արամադրութիւնք :
- 5° Ներքին կանոնադրութիւն Ընդհ. Ժողովին , կամ Ատենական կանոնք :

Ատենադրացիացաւ ժամ 6½ին ի ներկայութեան 40 երեսփոխանաց , որոց թիւը հետզհետէ բազմացաւ :

1° ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԻ ՆԱԽԸՆԹԱՅ ՆԻՍՏԵՐՈՒՆ

Ատենապետ ԷՖ. հրաւիրեց ժողովականները որ ժ. նիստի ատենագրութեան խմբագրութեան վրայ դիտողութիւն մը եթէ ունին , յառաջ բերեն :

ՄԱԶԻՐՄԵԱՆ Յ. ԷՖ. — Տասներորդ նիստի ատենագրութեան 146 երես երկրորդ էջին մէջ իմ խօսքիս վերջը գրված է , « կը մնայ ուրիշ միջոց մը , այն է ատենական կանոն մը սահմանել , զոր Եռսուֆեան էՖ. երկու յօդուածով կը ներկայացնէ , որու ամեն երեսփոխան կը համակերպի , եւ որով վաւերական կ'ըլլան ժողովին որոշումները » . այս խօսքս պիտի ըլլայ սապէս . « կը մնայ ուրիշ միջոց մը , այն է ատենական կանոն մը սահմանել , զոր Եռսուֆեան էՖ. երկու յօդուածով կը

ներկայացնէ , որու ամեն երեսփոխան կը համակերպի , եթէ որոշումներն օրինաւոր մեծագոյն մասով ըլլան , եւ որով վաւերական կ'ըլլան ժողովին որոշումները » :

Ուրիշ դիտողութիւն անդի չ'ունելով , ժ. նիստի ատենագրութիւնն ընդունված կը հրատարակվի , եւ կարգը կու գայ ժԱ. նիստին ատենագրութեանը :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Մետասաներորդ նիստի ատենագրութեան 156-րդ երեսի խօսքիս մէջ , առաջին էջի 40-րդ տողը գրված է . « Ամեն նիստի պէտք է առաջին խնդիրը ատենագրութեան խնդիրն ըլլայ » .

Այս կտորը պիտի ըլլայ . « Ամեն նիստի պէտք է առաջին խնդիրը նախորդ նիստի ատենագրութեան վաւերացման խնդիրն ըլլայ » :

Այս կտորին մէջ նախորդ նիստ եւ վաւերացման բառերուն ներկայութեան հարկը կ'իմացվի երբ ամբողջ խօսքս կարդացվի :

Նոյնպէս նոյն երեսը երկրորդ էջին սկիզբը խօսքիս վերջին մասը խառն գրված է, որ պիտի ըլլայ:

«Արդ կ'առաջարկեմ որ ժողովով որոշուի «տրվի նախ որ ամեն նիստի մէջ առաջին խնդիրն ըլլայ նախորդ նիստի ատենագրութեան հաստատութեան խնդիրը. ասի խնդրոց կարգը անցնի ու մէջ մ'ալ անկէ դուրս չը ձգուի: Ասկէ դատ ամեն նիստի սկիզբը Ատենագրութեան նախորդ նիստին արարքը բերանացի համառօտելով կամ անոր խիստ համառօտ մէկ քաղուածը կարդալով նորոգէ ժողովականաց յիշողութիւնը անոր բովանդակութեանը վերջը:»

«Երբ որ խնդրոց կարգը ժողովին հաւատարմութեամբ միայն կարդալով, եւ խնդիր մը հեղ մը հոն անցնելէ ետքը ժողովէն դատ մարդ արտօնութիւն չ'ունենայ զանի անկէ «դուրս ձգելու կամ վերի վայր յեղ յեղելու»: Այս առթիւ կ'առաջարկեմ որ խնդրոց կարգին մէջ միշտ նշանակվի, «վաւերացումն ատենագրութեան այս կէտ նիստին» ինչպէս նշանակված է սոյն նիստի ատենագրութեան վերջը, վտխանակ «Ատենագրութիւնը» տարտամ բառին զոր գործածելու վրայ է դեռ Գիւանը: Ռուսիսեան էֆ. էր, որ խնդրոց կարգին մէջ նշանակված «Ասոյ եւ Աղթամարայ կաթողիկոսութիւնը» տարտամ բառերուն դէմ բողոքեց, չ'եմ գիտեր թէ ինք ինչո՞ւ համար այդ տարտամութիւնը պահել կը ճգնի ատենագրութեանց մասին:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Ատենագրութեան 133րդ. երեսը իմ խօսքիս մէջ «ղի պիտոր խնայեմ» գրված է, փոխանակ «չի պիտոր խնայեմ» ըլլալու:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Այդ գիտողութիւնը տրւած պարական վրիպակի մը վրայ է, եւ իբր այն չը վերաբերի Գիւանին:

Այս գիտողութիւններէն ետքը ԺՍ. նիստի ատենագրութիւնն ընդունված կը հրատարակվի, եւ կարգը կու գայ ԺԳ.ին:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Նախ երկուսուսանորդ ատենագրութեան 170 երեսը, Գ. նիստի ատենագրութեան տպագրութեանը վրայ ընել ուղած գիտողութեանս մէջ «բայց տարբերութիւններ կան» խօսքիս պիտի կցվի նաեւ, «անոր վաւերացած ձեռագրին եւ տպագրված օրինակին մէջ իմ վերջին խօսքիս վերջը որ ե-

պիսկոպոսաց ուխտին կը վերաբերի, որոնք Գ. եւ Ս. նիստերուն հետ վերաբերութիւն ունին, որոց մէջ Ներսէս Սրբազան եւ Քրիստոստոս էֆ. Ղազարոսեան պատասխանած են իմ այն ուխտի առարկութեանս . . . »:

Երբ որ 171 երեսի խօսքիս վերջին պարբերութենէն առաջ «մէջ բերելով» բառէն ետեւ ըսած եմ նաեւ թէ՛ «նոյն ճամբով դուրս կրնայ ձգվիլ նաեւ ժողովիս մէջ եղած խօսք մը»:

Երբ որ 173 երեսը առաջին գիտողութեանս վերջը, հինգերորդ նիստին մէջ ըրած գրաւոր առաջարկութիւնս ատենագրութեան մէջ զբերված չըլլալուն դէմ բողոքելով պահանջած եմ որ այն երկուսուսանորդ ատենագրութեան մէջ նոյն գիտողութեանս կցվի, բայց չ'է կըցված: Այս մասին Գիւանէն բացատրութիւն կ'ուղեմ:

Երբ որ ը գիրը, հայերէն լեզուի ուղղագրութեան կանոնին համեմատ, բառերուն մէջ կը հնչվի բայց չը գրվի. նոյնպէս աշխարհաբան կրթութեան բայերն ու նման կազմութիւն ունեցող բառերն ու ով կը գրվին եւ ոչ չ'ով. Ատենագրութեան մէջ անգամ զատնք եւ ասոնց պէս ուրիշ բաներ իր ընտրած ուղղագրութեանը յարմարեցուցեր է: Ես իմ խօսքերուս մէջ իմ ընտրած, մանաւանդ թէ Ազգին ընդունած արդի ուղղագրութեան պահով կ'ուղեմ, ես չ'եմ ուղեր որ Ազգին պատմութեան առջեւ իբրեւ սխալ ուղղագրութեան տէր ներկայանամ:

ԱՏԵՆԱՊՊԻՐ ԷՖ. — Ի պատասխան Այվատեան էֆ.ի խնդրած բացատրութեան՝ կը փութամ յայտնել թէ Գիւանը անոր գրաւոր առաջարկութիւնը՝ որոյ վրայ խնդիր կը յարուցնէ, չը կրնալով գտնել գիւանական թղթոց մէջ, յառաջագոյն խնդրած է զանի Այվատեան էֆ.էն, որպէս զի կարենայ ատենագրութեան մէջ անցընել իւր ըրած գիտողութեանը կցելով. սակայն Այվատեան էֆ. ինչ փոյթ է ինձ, փնտռեցէ՛ք ու գտէ՛ք ըսած է. արդ՝ Գիւանը վերստին կ'ազաչէ զինքը՝ որ եթէ ծանր աշխատութիւն մը չը համարիր, չ'նոր՞ ընէ իր գրաւոր առաջարկութիւնը յանձնել, եթէ միշտ կը ցանկայ զանի ատենագրութեան կցեալ տեսնել. եթէ ոչ՝ յաւիտեան տի բողոքէ առանց արդիւնք մը ձեռք ձգելու: (1)

(ԱՅՎԱՏԵԱՆ ԷՖ. — Շատ աղէկ):

(1) Այս առթիւ ուղղագրութեան վրայ յարուցեալ

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այվատեան էֆ. ատենագրութեան 170 րդ. երեսին մէջ գրված իր խօսքերուն վրայ գիտողութիւն կ'ընէ, բայց չորս անգամ խօսք ըրած է. իւր գիտողութիւնը որու որ կը վերաբերի, կը խնդրենք որ յայտնէ որոշակի:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Յայտնի է թէ նոյն գիտողութիւններս ատենագրութեան խմբագրութեան կը վերաբերին:

ԱՏԵՆԱՊՊԻՐ ԷՖ. — Այվատեան էֆ. կ'ըսէ որ իւր այս ինչ խօսքերը պակաս արձանագրվեր են, քանի որ ինքն է խօսքին հեղինակը՝ իւր պատասխանատուութեան տակ ինչպէս իւր առջի գիտողութիւնները, այս գիտողութիւններն ալ կ'անցնին այսօրեայ նիստին ատենագրութեան մէջ, եւ պակասը կը լրանայ. սակայն ուղղագրութեան մասին ըրած գիտողութիւնը հոս տեղի չ'ունի, քանի որ սղագրութեան եղանակ մը չ'ըլլալուն պատճառաւ ատենագրանից խօսքերը բառ առ բառ արձանագրել անկարելի է, եւ Գիւանը իմաստից հարազատութեանը միայն մտադիր խօսքերը կ'ընտրալի համառօտել եւ այնպէս ատենագրել, որով ատենագրութեանց խմբագրութիւնը Ատենագրութեան գրչին յատուկ թճն ու գրական զբօսմը կը կրէ. վասն զի մի եւ նոյն գրչէն եւլած աշխատութեան մը մէջ բոլոր ժողովականաց առանձին ոճը չը կրնար պահվիլ, եւ անհեթեթ է այս տեսակ պահանջում մ'ընել. Եւրոպայի ժողովներու մէջ սղագրութեան միջոցով խօսքերը ժողովականաց բերնէն ելածին նման կ'արձանագրվին բառ առ բառ, սակէ զատ նաեւ անոնց մէկ համառօտ քաղուած մը կայ, որ լրագրաց կը հաղորդվի եւ որ մեր գործածած արդի ձեւն է, կարելի եղած կատարելութեամբ: Այս ձեւը անվթար կը պահէ ատենագրանից գաղափարը եւ ճարտասանական ոճը, բայց բառերը եւ լեզուարանական հանդամանքները կրնան փոփոխութեանց ենթարկվիլ գործին այս վիճակին մէջ:

ՓՄՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այվատեան էֆ.ի գիտողութիւնը՝ ոճի եւ բառերու չը վերաբերի ընտրած, այլ Ռուսիսեան էֆ.ի յատուկ այն ուղղութիւնը՝ որ հոս բարբոյժին անտեղի, Ատենագրութեան տպագրութեան կախեալ է որոյ վրայ հոս ոչ մէկու մը համար ունի տալու: Թող հանդարտ ըլլան այդ գունակ տաղանդով տառապեալ ատենագրութեանը գիտէ որ ատենագրութեանն է այդ պատասխանատուութիւնը:

(Մանօթութիւն Ատենագրութեան)

զախօսական եղանակին վրայ է, որ մեր լեզուին բուն ուղղագրութիւնը կ'ազատուի, որու դէմ մենք կը բողոքենք. իսկ եթէ ժողովը թողտուութիւն ընէ, այն ատեն Ռուսիսեան էֆ. կրնայ իւր ընտրած լեզուով գրել:

ԱՏԵՆԱՊՊԻՐ ԷՖ. — Լեզուով ըսիք, Ատենագրվիրն ինչ գիտնայ թէ այս բառը ու ով արտասանել ուղեցիք թէ չ'ով, ուստի ինչպէս ուղէ անանկ կը գրէ, եւ իրաւունք ունի ըսելու թէ՛ չ'եմ կրնար իմ ոճս, ուղղագրութիւնս փոխել. եթէ չ'էիք ուղեր իմ գրչիս, ատենագրարի պաշտօն չը տայիք թող ինձի. վերջապէս չ'էիք սպասեր անչուշտ որ իր գրիչը մէկդի դնելով ձեր գրիչը պիտի գործածէր:

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ալ դուրսերը բաւական հայտնակ գաւառներ պարտած եւ տեսած եմ որ, դաւառական աղագայնոց հնչումը Պօլսեցեոց արտասանութիւններէն բաւական կը տարբերի. օրինակի ազագաւ, Ֆրոսի սեռականը Ֆրոսի կը հնչեն եւ ոչ Ֆրոսի . . .

Ատենագրութեան էֆ. ընդմիջելով ատենագրանը կ'ազդարարէ թէ խնդրէն կը շեղի, եւ թէ ընդ. ժողովը ճեմարան չ'է որ խօսք առնուն երեսփոխանները լեզուարանական գիտողութիւններ ընելու քերականութեան, ուղղագրութեան կանոնաց վրայ: Այս աղագարարութենէ ետքը Ատենագրութեան էֆ. ԺԳ. նիստի ատենագրութիւնը ընդունված հրատարակեց եւ ԺԳ. նիստինը գիտողութեան ենթարկեց, որն որ առանց գիտողութեան ընդունվեցաւ: Յետոյ Ատենագրութեան էֆ. հաղորդեց ժողովին հիւանդութեան պատճառով քանի մը բացակայ երեսփոխանաց անուններ եւ կարգաց Տէրոյնց էֆ.ի մէկ նամակը՝ որով յիշեալ էֆ. իւր երկու բացակայութեանց պատճառ իւր հիւանդութիւնը մէջ կը բերէր եւ երրորդին՝ հրաւիրագիր ստացած չ'ըլլալը:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Տէրոյնց էֆ.ի երկրորդ անգամ ժողովէն բացակայ գտվելուն պատճառն այն է եղեր որ, նոյն օրը իւր որդին մեռեր է, կը կարծէի թէ Տէրոյնց էֆ. աւելի այդ պատճառը մէջ բերած է իր նամակին մէջ. եւ ստուգիւ ինչպէս մարդ ժողովի կրնայ ներկայանալ, երբ իր որդին կը վախճանի:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ — Այս ձեռնարկ է:

ԵՆՈՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Այվատեան էֆ. ի գիտողութիւնը երկրորդելով կը յարեմ թէ բացակայութեան համար ժողովին օրինաւոր գաւառ պատճառներուն չ'ախ զօրաւոր է նաեւ

յուղարկաւորութեան գտնելու հարկն ալ, եւ ժողովական մը չ'է թէ միայն իր որդւոյն այլ նաև իր բարեկամին յուղարկաւորութեանն ալ ներկայ գտնելու համար երբ բացակայ կը զբաղի, պէտք է ներելի համարվի. վասն զի ասի թէ քրիստոնէական եւ թէ քաղաքային օրինաց առջեւ պարտաւորութիւն մըն է անդրժելի:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ար տեսնեմ որ Տէրոյնց էֆ. ի նամակին առթիւ ժողովը կրկին որոշեալ խնդրի մը կը դառնայ, խնդրի մը որ օրուան կարգէն դուրս է, եւ որու դէմ մանաւանդ քանի մ'անգամ սպառնական դիտողութիւններ եղած են: Տէրոյնց էֆ. ազատ է իր կարծեաց մէջ, բայց մենք որոշեալ խնդիր մը յուղելու ազատութիւնը չ'ունինք. ուստի կը բողոքեմ անոնց դէմ որ այս կէտին վրայ խնդիր կը յարուցնեն:

Ժողովը Տէրոյնց էֆ. ի բացատրութեանց վերայ անոր բացակայութեան պատճառն օրինաւոր գտնելով զանի հրատարեալ չը համարիր, եւ կ'անցնի խնդրոց կարգին:

2. ՎԱԽԵՐԱՅՈՒՄ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՅ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱՅ

Ատենապետ էֆ. ժողովին յայտնելով թէ մայրաքաղաքիս մէկ քանի թաղերուն եւ գաւառաց մէջ երեսփոխանական նոր ընտրութիւններ կատարված են, Գործադիր Յանձնախմբին տեղեկագիրը ներկայացուց եւ ընթերցաւ, որոյ աւասիկ պատճէնը:

Ամենապատիւ Արքայան Հայր . . . Երեսփոխանական վերջին ընտրութեանց վաւերանալէն ետքը հետեւեալ ընտրութիւններն ալ կատարված են:

Մանճըլլի եւ միացեալ վիճակաց Առաջնորդ Գեր. Զաքարիա Եպիսկոպոս յատուկ տեղեկագրով եւ հանրագրութեամբ կ'իմացնէ թէ համահաճ հաւանութեամբ երեսփոխան ընտրված է,

Համարձուց էֆ. Շամբեան:

Մայր Եկեղեցւոյ թաղին Ընտրողական ժողովը կը տեղեկագրէ թէ միանալով Կէտիկ Բաշա եւ Քում Քապուի դուրսի թաղին Ընտրողական ժողով կազմած է, 1870 դեկտեմբեր 6ին քրէարկութիւն ըրած, 1229 ընտրողներէն միայն 272 քրէարկութեան ունեցած եւ բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրված է,

Թաղէոս էֆ. Պէկեան, 159 քրէնով:

Մնացեալ չորս երեսփոխանաց համար զեկ-

տեմբեր 13ին քրէարկութիւն ըրած է, եւ 330 քրէարկութիւններէն համեմատական առաւելութեամբ երեսփոխան ընտրված են,

- Վարապետ էֆ. Փանսեան, 246 քրէնով
- Գէորգ » Ստիմարաճեան, 229 »
- Մ. Յակոբ » Թօքատլըեան, 228 »
- Պօղոս » Պառնասեան, 220 »

Բերայի Ընտրողական ժողովը կը տեղեկագրէ թէ 1871 յունվար 17ին քրէարկութիւն ըրած եւ 402 ընտրողներէ միայն 65 քրէարկութեան ունեցած է, եւ բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրված են,

- Մարկոս էֆ. Աղաբեկեան, 33 քրէնով
- Յովնանէս » Տավուտեան, 33 »
- Յունվար 24ին համեմատական քրէարկութիւնը կատարված եւ երեսփոխան ընտրված են,
- Մկրտիչ էֆ. Մերասեէտեան 55 քրէնով
- Աբրահամ » Տամկաճեան 41 »
- Միքայէլ » Մամիկոնեան 39 »

Պէշիքթաշի Ընտրողական ժողովոյ Նախագահ Գեր. Խորեն Եպիսկոպոս կը տեղեկագրէ թէ յունվար 17ին քրէարկութիւն ըրեր բայց բացարձակ առաւելութիւն չը կարենալով գոյանալ համեմատական քրէարկութեան դիմեր է ի 24 յունվարի, եւ երեսփոխան ընտրվեր է, Մկրտիչ էֆ. Աճէմեան:

Յանձնաժողովս օրինաւոր գտնելով այս ընտրութիւնները, կը ներկայացնէ սոյն տեղեկագիրը պատկառելի ժողովոյդ որ բարեհաճի վաւերացնել նորոգ ընտրեալ 1 գաւառական եւ 11 Պօլսոյ երեսփոխանաց ընտրութիւնները:

28 Յունվար 1870

Գործ. Յանձնաժողովոյ ընտրութեանց Ատենապետ Օ. Խօճասարեան Ատենադպիր Յ. Արշակ:

Տեղեկագրին ընթերցումէն ետքը Ատենապետ էֆ. հրաւիրեց ժողովականները որ ընտրութեանց նկատմամբ դիտողութիւններն ընեն, եթէ ունին:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Յանձնախմբին տեղեկագիրը կ'ըսէ թէ Պէշիքթաշի մէջ առաջին ընտրութեան ատեն բացարձակ առաւելութիւն չը գոյանալով Ընտրող. ժողովոյ Նախագահը համեմատական քրէարկութեան դիմեր է. այս կէտը միջին մնացած է:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — (Յանուն Ընտր. Յանձնախմբին) Թէ եւ միջին պարագայ մը չը կայ, բայց բացատրեմ գործողութիւնը: Ընտրող. ժո-

ղովը առաջին անգամ քրէարկութեան ձեռնարկեր է, բայց ոչ ոք կրցեր է բացարձակ առաւելութեամբ ընտրվիլ. հետեւաբար երկրորդ անգամ քրէարկութիւն կատարեր է համեմատաբար առաւելագոյն քրէ ստացող անձանց վերայ, որոյ արդիւնքը հազորդված է Յանձնախմբին:

Տեղեկագրին վրայ ուրիշ դիտողութիւն չ'ըլլալով քրէնի կը զրկի, եւ ժողովը ընդհանուր հաւանութեամբ վաւերացնելով կը հաստատէ յիշեալ 12 երեսփոխանաց ընտրութիւնը, եւ Բարձրաշնորհ Նախագահին կը յանձնէ առանձին ազդարարագրով հրաւիրել զանոնք անմիջապէս իրենց պաշտօնին:

3. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Գ. ԱՏԵՆԱՊԵՏԻ ԵՒ Գ. ԱՏԵՆԱԳՊԻ ԸՆԴ. ԺՈՂՈՎԻՆ

Սոյն ընտրութեանց համար, քննիչ կարգեցան,

- Տ. Ամբրոսիոս Վարդապետ,
- Տ. Արիստակէս Քահանայ,
- Արվաճեան Յ. էֆ.
- Փափազեան Ս. էֆ.

48 երեսփոխանք քրէարկութեան մասնակից գտնված էին, եւ քրէահամարի արդիւնքն եղած էր Գ. Ատենապետի համար Գարակէօղեան Կ. էֆ. քրէ 38

Ուստի Գարակէօղեան էֆ. բացարձակ առաւելութեամբ քրէնից Գ. Ատենապետ ընտրվեցաւ:

Իսկ Գ. Ատենադպիր համար բացարձակ առաւելութիւն չ'էր կրցած գոյանալ, եւ համեմատաբար առաւելագոյն քրէ ստացած էին, Ալթուն Ա. էֆ. քրէ 18 Այվատեան Մատ. էֆ. » 46

Ուստի այս երկու անուանց վրայ միայն պիտի ըլլար երկրորդ քրէարկութիւնը:

ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ Կ. ԷՖ. — Այն վստահութեան համար որով ժողովը հաճեցաւ զիս պատուել այս պաշտօնին կոչելով, իմ խորին շնորհակալութիւնս յայտնելէս ետքը կը փափաքիմ զիտնալ թէ Գ. Ատենապետի պաշտօնն ինչ պիտի ըլլայ, ո՛ր է տեղը, եւ պարտաւոր պիտի ըլլայ արդեօք ամեն օր ժողովին ներկայ գտնելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ պատահի որ ժողովին առաջին ու երկրորդ ատենապետները բացա-

կայ գտնելու հարկադրին, անոնց պիտի փոխանակէ երրորդը, բայց երբ առաջինը կամ երկրորդը ներկայ ըլլան, երրորդը պարտաւորիչ գործ մը չ'ունի Գիւանին մէջ: Արդ' կըրնաք հիմայ թէ ձեր երեսփոխանական աթոռը մնալ, եւ թէ Գիւանը անցնիլ ու ձեր տեղը բռնել, ինչպէս որ կը կամիք: Իսկ այնպիսի պարագայի մը մէջ, յորում Գիւանը պէտք ունենայ խմբովին խորհրդակցութիւն մ'ընելու, անոր ամեն անգամքը հաւասարապէս ի մի խմբեալ կը խորհրդակցին:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Կարճ դիտողութիւն մ'ալ ես ունիմ, զոր կ'ուզեմ յայտնել քրէարկութեան չը ձեռնարկված:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեր դիտողութիւնը ինչ որ ալ ըլլայ չը պիտի կրնայ քրէարկութեան արդիւնքը փոխել. կ'ըմբռնեմ թէ ըսել կ'ուզէք՝ երբ ժողովը պաշտօնի կոչէ զձեզ, չը պիտի կրնաք ընդունիլ զայն:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Այո՛, ճիշդ այդ է ընելիք դիտողութիւնս, եւ այժմէն կ'առաջարկեմ որ յաջորդ առաւելագոյն քրէ ստացող իմ տեղս համեմատական ընտրութեան ենթարկվի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երանի կ'ըլլար եթէ այդ տեսակ դիտողութիւններ ժողովոյ առջեւ ընդունելութիւն գտնէին: Իմ փորձովս զիտէք թէ որչափ անկարելի է:

ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ Կ. ԷՖ. — Որովհետեւ ժողովը գրեթէ տեսակ մը անդառնալի մտադրութեամբ ուրբաթ օրերը կը գումարովի միշտ, որ թղթատարի յատուկ օրն է եւ զբաղման օր մը ինձի համար, ուստի պարտ կը համարիմ կանխադիտցնել որ չ'եմ կրնար շարունակ ամեն խորթաթ օրեայ նիստերուն ներկայ գտնվիլ. կը խնդրեմ որ այս յայտարարութիւնս ատենագրութեան մէջ անցնի:

Այս դիտողութիւններէ ետեւ Գ. Ատենապետը ընտրութեան քրէարկութիւնը կատարվեցաւ, որու այս անգամ 46 անձինք մասնակից եղած էին. քրէահամարի արդիւնքն եղաւ,

- Ալթուն Ա. էֆ. քրէ 24
- Այվատեան Մատ. » » 22

Հետեւապէս Ալթուն Ա. էֆ. օրինաւոր ընտրութեամբ Գ. Ատենադպիր ընտրվեցաւ ժողովին:

4. ՎԵՐԱՔՆՆԵՐԻՑԻՆ ԱՄԼՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ
— ԸՆԴՆԱՆՈՒՄ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.— Գրուէք էֆէնտիններ որ ասկէ երկու ատեան առաջ Սահմանադրութեան վերաբնութիւնը չի բացարձակ յուսով ընդհանուր վիճարանութիւն մ'առաջարկեցի անոր ոգւոյն եւ ընդհանուր տրամադրութեանց վերայ : Նոյն օրը եւ անկէ առաջ մէկ քանի առաջարկութիւններ յերեւան եկան, որոնք իրենց ընդհանուր բնութեամբ չ'էին կրնար մասնաւոր վիճարանութեան ընթացքին մէջ մտնել : Եթէ ժողովն ընդունելութիւն զանէին այդ առաջարկութիւնները, հարկ կ'ըլար Սահմանադրութեան առաջին յօդուածէն սկսիլ փոփոխութիւնը : զի առաջարկութիւնը Սահմանադրութեան այս կամ այն յօդուածին այս կամ այն մասնաւոր տրամադրութեան վրայ չ'էր, այլ սկզբան, այլ անոր ոգւոյն կը վերաբերէր, կամ այնպիսի տրամադրութեանց որոնք Սահմանադրութեան շատ մը յօդուածներուն վրայ կը ներգործեն, ժողովականներէն մէկը՝ Իփէքճեան էֆ. կարծեմ, թաղական մատակարարութեան գլխին վրայ վիճարանութիւն բացված ատեն՝ գիտել տալով որ ծրագրին մէջ « թաղերը կը ներկայանան իւրաքանչիւրն իր եկեղեցւոյ ժողովուրդէն ընտրեալ թաղական ժողովով մը » ըսված է, առաջարկեց որ ընդհանուր կերպով « իւրաքանչիւրն իր հայազգի ժողովուրդէն ընտրեալ թաղական ժողովով մը » ըսվի, որպէս զի եթէ առիթը բերէ ատեն Հայ անխտիր, թէ Հռոմական ըլլայ թէ Բողոքական, մեր ազգային իրաւանց հազորդ գալլի : Ան՝ սկզբան խնդիր մը՝ որ եթէ արժան է ընդունիլ, թաղական մատակարարութեան սահմանին մէջ չըջտիակ չը պիտի մնայ, այլ բընականօրէն Ընդհ. ժողովոյ, այլ Պատրիարքի ընտրութեանց եղանակն ալ անոր դրօշմով պիտի համակրի, փոփոխութիւնն ի հիմանց սկսելով : Աւրիչ առաջարկութիւն մ'ալ Փափազեան էֆ ի կողմէ եկաւ, Սահմանադրութեան նոր ծրագիր մըն էր եկածը : Ինչ կը նշանակէր ասի, եթէ ոչ ընդհանուր վիճարանութիւն ուղեւ վասն զի Սահմանադրութեան ծրագիրը յօդուած առ յօդուած քննութեան ենթարկված ատեն՝ ոչ ոք իրաւունք ունէր ամբողջ ծրագիր մը բերելու : Նոր ծրագրին հեղինակը Յանձնախմբինը անընդունելի կը գտնէր, եւ

կ'առաջարկէր ժողովին որ անընդունելի դատէ չ'է թէ ծրագրին մէկ յօդուածը, այլ զանի ամբողջագէտ, եւ սեղը իր ծրագրին անցնէ : Տարակոյս չը կայ որ ժողովն իրաւունք ունէր քննելու թէ իրեն ներկայացեալ ծրագրին սկզբունքը, ոճն ու ոգին արժան է ընդունելութեան թէ ոչ : Եւ անգամ մը այս էական քննութիւնն ըլլալ պէտք էր, որ մասնաւոր յօդուածոց քննութիւնը յաջորդէր անոր, եւ լուծվէր ծրագրին վերաբնութեան հանդոցը : Այս նպատակը կ'ենթադրէր իմ առաջարկութիւնն ընդհանուր վիճարանութիւն բանալու մասին, զոր եւ ժողովն ընդունեց : (Նոյնպէս վիճարանութիւն ուղղութեան միայն Փափազեան էֆ. քանի մը կէտեր գիտողութիւններ թղթի մը վրայ նշանակելու եւ Գիւանին յանձնելու է, որոց առաջինը միայն ընդհանուր տրամադրութեան կը վերաբերի, եւ է սա :

1. Երեսփոխանական ժողովն իրրեւ օրէնքագիր ժողով վարչութեան ամեն ժողովոյ եւ խորհրդոց օրինական ընթացքը գծէ, եւ Սահմանադրութեան մէջէն բարձրիւր այն մասերը որ վարչութեան ընթացքին կը վերաբերին :

Ասով ահա՛ կ'երեւի որ փափազեան էֆ. այս ծրագիրը չ'ընդունիր, այսօրէն կ'ուզէ Սահմանադրութեան մէջ սկզբունքի վերաբերեալ մասերը միայն թողուլ, իսկ վարչութեան ընթացքը օրինադրելը Ընդհ. ժողովոյ հեղինակութեան վերապահելու փ. ի միւս գիտողութիւններն են :

Փափազեան էֆ. ի միւս գիտողութիւններն են :
2. Եկեղեցական երեսփոխանաց ընտրութիւնը եկեղեցականաց միայն մասնաւորել, թէ եկեղեցականն եւ աշխարհական իրան մասնակցել ընտրութեանն :
3. Կրօնական եւ քաղաքական ատենի խորհուրդներն ունենալ թէ իրանն :
4. Երեսփոխանութիւնը մասնակի թէ ամբողջ, թէ կիսուակէս փոփոխել :
5. Ընտրելեաց ցանկ պէտք է թէ ոչ :
6. Երեսփոխանաց թիւը եւ բաշխման ձեւը :
7. Ընտրողութեան եւ ընտրելութեան պայման :
8. Հսկողութիւն մը, հակադէմ իշխանութիւն մը թաղական ժողովոց Գիւաններէն եւ Երեսփոխանութեան համար :

Այս կէտերուն ոչ մէկը ընդհանուր տրամադրութեանց կը վերաբերին : Եւ ասոնց ամենուն մասնաւոր տեղը պիտի գայ ծրագրին զրուխներուն մէջ, եւ այն ատեն կրնան ուշադրութեան առնվիլ : Իսկ առաջին կէտին վրայ

թէ որ փափազեան էֆ. խօսք ուղէ, կու տամ : ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ.— Երբ ես իմ ծրագիրս ներկայացուցի, չ'ըսի թէ Յանձնախմբինը չ'եմ ընդունիր : Վիճարանութիւնը այն ատեն թաղական մատակարարութեան գլխին վրայ էր, եւ Ստեփանայեան էֆ. արածութիւն տուաւ որ ատեն ժողովական այս մասին իւր ունեցած գիտողութիւնները պատրաստէ եւ գրաւոր ներկայացնէ ժողովին : Այս արածութեան համեմատ թաղական մատակարարութեան գլխիւր իմ գիտողութիւններովս նորէն ի գիր առած ատենս՝ հարկադրեցայ ամբողջ Սահմանադրութեան նոր ծրագիր մը շինել, եւ քանի մը երեսփոխանաց խորհրդակցութեամբ պատրաստեցի դայն, որոյ վրայ նախորդ նիստի մը մէջ խօսք բացվեցաւ եւ ասկէ հետեւեցաւ Սահմանադրութեան վրայ ընդհանուր վիճարանութիւն մը բանալու որոշումը : Ես չ'եմ պահանջեր որ իմ պատրաստած ծրագիրս Յանձնախմբին ծրագրին տեղն անցնի անպատճառ : Եւ կարծեմ ըսի այն ատեն թէ ծրագրին մէն մի մասերը վիճարանութեան միջոցին ըստ կարգին կը ներկայացնեմ ժողովին, եւ թէ ժողովն ազատ է ընդունելու կամ մերժելու, ինչպէս հարկ դատի : Ենք Յանձնախմբին ծրագիրը խիստ բեռնաւորված տեսանք եւ ուղեցինք որ Սահմանադրութիւնը միայն Բ. Գրան հաւանութեան ենթարկելի օրէնքները պարունակէ, եւ ներքին մասերը՝ որոնք փորձառութեամբ յարատեւ փոփոխութեանց պէտք ունին, մէկը զմիւր : Սահմանագ նկատեցինք որ ներքին գործոց անկախութիւնը ազգային կենսական իրաւունք մըն է Տէրութեան կողմէն ընդունված, եւ զանոնք հարկ չը կար Բ. Գրան ներկայացնելու :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՅ.— Ազգային Սահմանադրութեան վերաբնիչ Յանձնախմբին պատրաստած ծրագրին, որուն վրայ որ Ընդհ. ժողովս որոշած է կատարել իր վերաքննութիւնը եւ սկսած իսկ է թաղական մատակարարութեան գլխին, ընդհանուր տրամադրութեանց վրայ երեք գիտողութիւն միայն ունիմ, ուրիշ տրամադրութեանց նկատմամբ Յանձնախմբին համաձայն եմ : Խմբագրութեան եւ յօդուածոց առանձին տրամադրութեանց վրայ ունեցած գիտողութիւններս երկրորդական բաներ են, որ իրենց տեղւոյն օւ ժամանակին կը պահեմ :

Ահա ասիկ ընդհանուր տրամադրութեան վրայ իմ երեք գիտողութիւններս :
« Ա. Կեղեցական եւ Գաւառական մէյմէկ խորհուրդ միայն ըլլան 10 ական անդամէ

« բաղկացեալ եկեղեցականն եւ աշխարհականն :
« խառն, փոխանակ կրօնական եւ Գաղաքական
« երկերկու խորհուրդներ ըլլալու : 12 ականէն
« 2/3 ական անդամէ բաղկացեալ : Այս ատեւ ան-
« գամոց 3 ը պաշտօնականներ կամ մասնագետներ
« ըլլան ազգային հինգ տեսակ պաշտօնից, այն է
« Յարարեական գործոց, Արօհական գործոց,
« Գրասխարհագրութեան գործոց, Խնամասարութեան
« գործոց եւ Ելեւմտական գործոց, միւս
« հինգէն մէյմէկ հոգի իրենց օգնական կամ երկ-
« բարդ անդամ : Խմբագրութիւնն ձեռնհաս իր
« պաշտօնին եւ պատասխանատու խորհուրդին,
« եւ խորհուրդը ամենուրեւ համար պատասխանա-
« տու ժողովին : Միայն կրօնական գործոց պաշ-
« տօնեայն կամ մասնագետն ու օգնականը
« միշտ եկեղեցական մասնաւոր կայիսկոպոս
« ըլլան, իսկ միւսները կարենան ըլլալ թէ եւ
« կեղեցական եւ թէ աշխարհական » :

« Բ. Թաղական Խորհուրդները բաղկանան
« 3 ական անդամէ, փոխանակ 10 ի, նոյնպէս
« թաղական հինգ տեսակ գործոց պաշտօն-
« եայք, միշտ մէկը միւսին նաեւ օգնական
« կամ երկրորդ ըլլալու պաշտօն ունենալով :
« նոյնպէս իւրաքանչիւրն ձեռնհաս իր պաշ-
« տօնին եւ պատասխանատու խորհուրդին, եւ
« խորհուրդը ամենուրեւ համար պատասխանա-
« տու թաղական ժողովին » :

« Գ. Թաղական մատակարարութիւն կարեւ-
« նայ կազմել թաղ մը, ուր եկեղեցի մը կայ
« եւ գոնէ 10 ընտրող ունի փոխանակ 250 ի
« եւ ձեռնհաս է իր եկեղեցւոյն եւ նախակըր-
« թական գարոցի մը ծախքը հոգալու » :

Այս գիտողութիւններս պարզութեան, գիւրութեան եւ գործադրական կարելիութեան համար են, եթէ հարկ տեսնէ ժողովս, կրնայ ասոնց վրայ երկար բացատրութիւններ տրվի :

Աւստի Յանձնախմբին ծրագրին ընդհանուր տրամադրութիւնքը, այս գիտողութեանց համեմատ, հետեւեալ կերպով կ'ամփոփեմ, որ խիստ սակաւաթիւ յօդուածներէ կրնան բաղկանալ, եւ շատ գիւրին կ'ըլլայ կարծեմ վերաքննութիւնը, եթէ ժողովն նոյն բաժանմանց համեմատ մասն առ մասն կատարէ իր քննութիւնը, վերացեալ կերպով, առանց ծրագրին խմբագրական բաւերուն քննութեանը մտնելու : Եւ երբ վերաքննութիւնը աւարտի, կրնայ յանձնել զանի նորոց խմբագրութեան մը, եւ ինք ետքը անդամ մ'ալ անոր ընդհանուր ընթացքով ընկէ ետեւ վաւերացնելու յանձն-

նել Բ. Դրան հաստատութեանը .
 Ահաւասիկ այն տրամադրութիւնքը ըստ հինգ
 գլխոց ծրագրին , որ են , նախորդ գլուխը այն
 է Հիմնական սկզբունքը , վերջին գլուխը այն է
 վերաքննութեան գլուխը եւ միջին երեք զը-
 լուխները , ըստ բաժանման մեր ազգային վար-
 շութեան , այն է , Անդրոնական վարչութեան ,
 Գաւառական վարչութեան եւ Թաղական Մա-
 տակարարութեան գլուխները . եւ արդարեւ
 որ կողմ ալ դառնաս , ինչ կերպ ալ կարգադ-
 րես , այդ երեք գլխոց բաժանմունքներէն միայն
 կրնայ բաղկանալ մեր Ազգին Տաճկաստան բը-
 նակօղ բաժնին սահմանադրութիւնը , որ են .

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Ազգային վարչութեան կերպը .

- Պաշտօնը .
- Բաժանումը .

ԳԼՈՒԻ Ա. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ազգ .

Անդրոնական ժողովին կազմութիւնը .

- Պաշտօնը .
- Ընտրութիւնը .
- Փոփոխութիւնը .

Անդրոնական Խորհուրդին կազմութիւնը .

- Պաշտօնը .
- Ընտրութիւնը .
- Փոփոխութիւնը .

Պատրիարքը .

- Պաշտօնը .
- Ընտրութիւնը .
- Փոփոխութիւնը .

ԳԼՈՒԻ Բ. ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Գաւառ .

Գաւառական ժողովին կազմութիւնը .

- Պաշտօնը .
- Ընտրութիւնը .
- Փոփոխութիւնը .

Գաւառական Խորհուրդին կազմութիւնը .

- Պաշտօնը .
- Ընտրութիւնը .
- Փոփոխութիւնը .

Առաջնորդը .

- Պաշտօնը .
- Ընտրութիւնը .
- Փոփոխութիւնը .

ԳԼՈՒԻ Գ. ԹԱՂԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թաղ .

Թաղական ժողովին կազմութիւնը .

- Պաշտօնը .
- Ընտրութիւնը .
- Փոփոխութիւնը .
- Թաղական Խորհուրդին կազմութիւնը .
- Պաշտօնը .
- Ընտրութիւնը .
- Փոփոխութիւնը .
- Թաղապետը .
- Պաշտօնը .
- Ընտրութիւնը .
- Փոփոխութիւնը .

ԳԼՈՒԻ Դ. ԵՐԶԻՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Կը մնան ծրագրին մէջ Հ-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն եւ
 Ժ-դ-է-ց Է Խ-ը-ը-ը-ը-ը-ը-ը-ը-ը-ը Ի-ն-ն-ն-ն-ն երկու
 գլուխները , զորս կը կարծեմ որ աւելի
 գործադրական մասեր են քան թէ միւս երեք
 գլխոց պէս Բ. Դրան հաստատութեանը են-
 թարկելի օրէնքներ , ինչպէս են նաեւ միւս
 երեք գլխոց տրամադրութեանցը շատ մը ման-
 րամասն բացատրութիւններն որ աւելի հրա-
 հանգներ են քան թէ օրէնքներ . անոր համար
 հարկ չ'է ասոնց ամենը վերոյիշեալ տրամադ-
 րութեանց կցել , գործը ստուարացնել եւ այն-
 պէս ներկայացնել Բ. Դրան : Կրնայ ընդհ. ժո-
 ղովս ինքնին սահմանել զանոնք , վաւերացնել
 եւ ըստ հարկին փոփոխել , առանց ամեն ան-
 գամին անոնց ամենուն համար Բ. Դրան հաս-
 տատութեանը կարօտելու :

ԳՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՑ. — Ժողովը գումարված է
 Սահմանադրութիւնը վերաքննելու , բայց ու-
 մանց այնպէս կը թուի թէ նոր մը պիտի խըժ-
 բագրենք : Ամենքն ալ կրնան մէկ մէկ ծրա-
 գիր շինել եւ ժողովին ներկայացնել , բայց
 պէտք է զիտնալ որ արդէն ծրագիր մը կոյ
 ի պաշտօնէ ներկայացված . Բ. Դուռը Սահմա-
 նադրութիւնը որ եւ է պատճառի մը համար
 դադրեցնելով Յանձնաժողով մը դրաւ զայն
 վերաքննելու համար , եւ այս վերաքննեալ Սահ-
 մանադրութիւնը կրկին Ազգին դարձուց որ նա
 ալ իր կողմէն քննէ . հետեւապէս սոյն Երես-
 փոխանական ժողովը Յանձնախումբ մը կար-
 դեց ու ըսաւ , Ազգին պիտոյից համեմատ Սահ-
 մանադրութիւն մը ծրագրէ ու բեր մեզի . եւ
 ահա այս ծրագիրն է որ վերջապէս եկաւ մե-
 զի . հիմա նոր Սահմանադրութիւն մը շինելու
 խնդիր կը ծագի : Փափազեան է՞ք . նոր ծրա-
 գիր մը կ'առաջարկէ , Այվատեան է՞ք . նոյնպէս ,
 եւ թերեւս եկող շարթու ալ ուրիշներ մէկ մէկ
 ծրագիր բերեն , որով լարիւրինթոսի մը մէջ
 մտած պիտի ըլլանք : Ուրիշ բան մը կրնանք

ընել ինչպէս Ստեան է՞ք . ըսաւ , վիճարանիդ
 հիմնական սկզբունց վրայ եւ տեսնել թէ փո-
 փոխութեան կարօտ քան մը կա՞յ . առաջին
 գլխէն սկսելով կրնանք ընել քննութիւնը , այս
 է իմ առաջարկութիւնս : Կան կէտեր որ ծրագ-
 րին մէջ սրբադրված են արդէն , եւ փոփո-
 խութեան կարօտ մասեր եթէ գտվին՝ կ'ուղ-
 ղըվին , ըսողը Յանձնախումբի անդամներն ալ
 չ'են ըսեր թէ ընդհ. ժողովն իրենց ծրագիրն
 Աւետարանի պէս ընդունի . ինչ հարկ կայ
 ուրեմն նոր ի նորոյ ծրագիրներ շինելու երևել
 եւ գործը երկարաձգել : Ես ամենէն աւելի սա
 կ'ուզեմ յիշեցնել որ Յանձնախումբն ինքն իր
 գլխին ծրագիր մը չ'ինած ու բերած չ'է , այլ
 ընդհ. ժողովը տուած է այդ պաշտօնը . ուստի
 կը կրկնեմ թէ առանց գործին բնական ընթաց-
 քը չ'իտեմելու՝ պէտք է անոր ծրագրին վրայ
 քննութիւնը կատարել յօդուած առ յօդուած ,
 հիմնական սկզբունքէն սկսելով :

ՈՍԿԱՆ Յ. ԷՑ. — Խօսք կ'ուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ոսկան է՞ք ի խօսք չը
 տուած՝ նախ ժողովին դիտել կուտամ որ նոյն
 իսկ Այվատեան է՞ք . բերաւ խնդիրն ընդհանուր
 վիճանութեան մէջ դրաւ , մէկ քանի փոփոխու-
 թեանց հետ առաջարկելով նաեւ որ հանգա-
 նակութեան ու ատենական կանոններ վերցը-
 վին , ինչպէս արդէն Փափազեան է՞ք . ալ
 կ'ըսէր :

ՈՍԿԱՆ Յ. ԷՑ. — Ազգին ձայնը երբ զիս ալ

երեսփոխանական պաշտօնին հրաւիրեց , հա-
 մոզված էի թէ օրէնքի մը գործադրութեան
 պարտաւորութիւն ունիմ օժանդակելու , բայց
 օրէնք մը վերստին խմբագրել իմ գաղափարէս
 հետի էր : Իմ կարծիքս սա է որ Սահմանադրու-
 թեան ամեն կէտերը առանց վերաքննելու պէտք
 է գործադրենք , միայն հրահանգ մ'ունելով ի
 ձեռին . բայց եթէ այս անկարելի է , կը յի-
 շեցնեմ Նիկեոսեան է՞ք ի առաջարկութիւնը՝ որ
 է բուն Սահմանադրութիւնը վերաքննութեան
 ենթարկել , Յանձնախումբին ծրագիրն իրր ազ-
 արար տեսր մը նկատելով : Եթէ այս ալ բա-
 ւական չ'է , Օղսէն է՞ք ի առաջարկութիւնը կը
 յիշեցնեմ այն է՝ Ռուսիան է՞ք ի բերած տե-
 ղեկագիրը բաւական համարել եւ գործել :

Ես այս մասին դրաւ որ բան մը պատրաստած եմ ,
 մեր վերաքննելի Սահմանադրութեան քանի մը
 հիմնական սկզբունցն անսխալի հետեւութեանց
 վրայ . որ քանի մը զիշեցային երկայն տքնու-
 թեանց արդիւնք մըն է , եւ զոր ըստ կարի
 համապատասխան ժողովին ուղղութեանը յանձ-

նել կը փափաքիմ , յուսալով որ թոյլտուութիւն
 կ'ընէ ինձ դայն կարգալու :

Ահաւասիկ իմ տեսութիւնս .

Վերաքննելի Սահմանադրութեան քանի մը

հիմնական սկզբունց անսխալի հետեւութիւնք :

Ա. Սահմանադրութեան հիմնական սկզբունց
 Ա. յօդուածը կըսէ . « Հայոց ազգային վար-
 շութիւնը երեսփոխանական է , - մէն ք-մէն-
 է-ը-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն » . ինչ որ ամեն ժամանակ եղած է՝
 նոր բան չ'է , հետեւաբար արդի երեսփոխա-
 նութիւնը յառաջագոյն ստացեալ արտօնութեան
 ընդլայնում մ'է առ առաւելն , եւ ոչ թէ մը-
 տաց բուռն յեղափոխութեան մը ծնունդ : Մայ-
 րայեղ կարծիքները համաձայնեցնելու համար
 այս կէտը բացայայտելն անհրաժեշտ է :

Բ. Երեսփոխանութեան ուժը ձայնից բաղմու-
 թեան մէջ է (տես յօդուած Բ.) . օրինաւորու-
 թիւնը կը պահանջէ որ ձայնից բաղմութիւնը
 ժողովրդեան մեծագոյն մասը ներկայացնէ .
 կամ , լաւ եւս ըսելու համար , անոր կամքն
 ըլլայ . այս տրամադրութեան զուրս չի կայ
 հաւասարութիւն : Այլիկարութիւն ըսվածը
 ինքնին ապիկառ պատճառանք մ'է , որ չի կըր-
 նար զեղծումը արգարացնել . օրէնք մը գոր-
 ծադրելի ըլլալու համար հարկ է որ ժողովրդ-
 դեան վիճակին համեմատի : Բայց եթէ Սահմա-
 նադրութիւնը իրրու զեղեցիկ ստացուած կա-
 րելի եղածին չափ իր ամբողջութեանը մէջ պա-
 հել հարկ է , կ'առաջարկեմ որ Պոլսեցի Հայք ,
 փոխանակ մեծագոյն մասի իրաւունքը իրենց
 սեպականելու , անոր աւանդապահն ըլլան
 բացարձակապէս , մինչեւ որ Ազգին լրութիւնը
 այնչափ լուսաւորվի որ իր իրաւունքը ձանձ-
 նայ եւ զանի վայելէ :

Գ. Որովհետեւ այս սկզբունք Հայոց Եկեղեց-
 ւոյն մէջ աւանդական են (տես յօդուած Գ.) ,
 կը հետեւի որ մեր Սահմանադրութիւնը ժողո-
 վրդական է , ըստ որում ժողովուրդը՝ Եկեղեց-
 ւոյնն է իսկ ազգը քաղաքականութեան : Հոս
 զիտել արժան է , իրրու բացառութիւն , որ
 Քիւնէի բառը Սահմանադրութեան մեզի չնորհօ-
 ղին ըմբռնմանը մէջ քաղաքական մարմին մը չը
 նշանակեր , այլ լ'է կրօնական հաղորդակցու-
 թեամբ միութիւն մը . դժբաղդաբար այս գե-
 ղեցիկ միութիւնն իս այժմ երեք ազգութեանց
 բաժնված կը տեսնանք , որոնց վրայ գուցէ ,
 ի մօտոյ չորրորդ մ'ալ աւելնայ . աղետալի
 արգիւնք մեր յետագիւրտութեան վերջին դարուս
 մէջ : Բայց եւ այնպէս այս բաժանմանց հա-
 կառակ կայ բան մը որ սա հասարակ ամենուն

կը պատկանի, այն է շա՛տ անուշը: Արդ՝ մենք ազատամիտ քաղաքակրթութեան գործ մը բռնած կ'ըլլանք եթէ (անկախ ի կրօնականութենէ կամ ի քաղաքականութենէ): Այսպէս թափաքան եւ բանասիրական ձեռնարկութեանց մէջ եղբայրական համակրութիւն ցոյց տանք ամեն անոնց՝ որոնց սիրելի է շա՛տ անուշը:

Գ. Ամենակարեւոր է սրտակի պաղատար մը ունենալ մեր գործառնութեանց շրջանակին. ըստ իմ անոր նիւթակնան մտքը խիստ անձուկ է. քանի մը թաղական եկեղեցիներ, անոնց կից նախակրթական վարժոցներ, քանի մը վանքեր եւ հիւանդանոց մը. այս իրաւասութենէ անդին եթէ բան մը կայ այն է մեր վեհափառ Տիրոջը գթութեան գիւմելու արածութիւնը: Իսկ բարոյական մասը անհամեմատ ընդարձակ, որ է շա՛տ անուշը: Բնականութեան եւ քաղաքակրթութեան բարիքը անոր վայելել տալը Արդ, մեր գործը պարզ է, եւ բարի ու պարզամիտ ժողովրդեան հետ է. մեր տեսութեան եղանակն ալ ճիշդ այնպէս պէտք է ըլլայ. ուստի քիչ մարդ, քիչ խօսք եւ շատ գործ:

Ե. Ի վերջոյ կը յաւելու՞մ. մեր գործը, հոս սրբաւայրիս մէջ, իրրեւ պարզապէս ընկերական բարեգործութիւն՝ նիւթական փոխարինի ակնկալութենէ վեր է եւ խղճի խայթէ զատ պատուհասի զմեզ ենթակայ չ'ընենք, նաեւս գաղանթը իսկ չը պահանջեր բացարձակապէս. բայց եթէ հաճոյ թուի զանի քաղաքական կերպարանքով մը զգեստաւորել կամ այնպէս ըմբռնել տալ, պէտք է մոռնալ որ այդ կարգի օրէնք մը հարկաւ կ'ենթադրէ զգալի փոխարէն եւ պատուհաս, վաւերացեալ ուղղակի նոյն իսկ օրինաց տրամադրութեամբ, անոնց որոյ գործադիր իշխանութիւն չը կրնար ըլլալ. հետեւաբար հարկ կ'ըլլայ Սահմանադրութեան մէջ աւելցնել պարտաւորութիւնը, զատ զլուխ մը: Եթէ այս անկարելի ըլլայ, ապա Սահմանադրութիւն ըսածնիս կամայ բարեգործութիւն մը ըմբռնել հարկ է եւ ոչ ինչ աւելի:

ԱՅԿԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Ահա քանի մը առաջարկութիւն ալ Ոսկան էֆ. ի կողմէ, որ ընդհանուր փոփոխութեան կը վերաբերի: Պատժական օրէնք մը կ'ուզէ յաւելցնել Սահմանադրութեան մէջ, եւ քիչ մարդ, քիչ խօսք ու շատ գործ կ'ըսէ, այսինքն կ'առաջարկէ ժողովներու անդամոց թիւը նուազեցնել. ասոնց ամենքն ալ ընդհանուր դիտողութիւններ են:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենապետ էֆ. ը-

սաւ թէ Այլատեան էֆ. ի առաջարկութիւնը իմ առաջարկութեան հետ միացած է. բայց թիւերու ինդիք մ'ալ կար անոր առաջարկութեան մէջ: Են այդ թիւերու առձեռնակին ալ չ'եմ ընդունիր. միայն երեսփոխանութեան թիւը կրնայ որոշուիլ. բայց Քաղ. ժողովոյ եւ Տեսուչ եւ այլ Խորհրդոց թիւերուն որոշուելուն ինչ հարկ կայ: Ասկէ առաջ Քաղ. ժողովը 20 հոգիէ կը բաղկանար, հիմա 6 հոգիէ կը բաղկանայ. նախորդ Աւրչութեան օրով Տեսուչական Խորհուրդը 20 հոգիէ կը բաղկանար. եւ մինչեւ անգամ 14-15 անգամ մնացած ատենը, մեծ փոյթ կը տարկէր պակասը լրացնելու: Սահմանադրական Աւրչութեան օրով ասոնց թիւերն ալ նուազեցան եւ այժմ երեքի իջաւ: Այլատեան էֆ. պաշտօնէութիւն կ'առաջարկէ ըսել է այս պաշտօնները մէկ մէկ անձերու յանձնել. ինչ հարկ կայ թիւերը որոշել Սահմանադրութեան մէջ, թիւերու օր մը յաւելցընել հարկ ըլլայ: Քօլօլեան էֆ. պատմեց մեզի թէ ինչպէս վերաքննութիւնը սկսած է. մենք գիտէինք զայն. սակայն երբ կ'ըսէ թէ ամեն երեսփոխան այսպէս մէկ մէկ ծրագիր բերէ ինչ ժողովը չը կրնար մէջէն գուրս ելնել, մեծապէս կը միտալի. վասն զի ամեն երեսփոխան իւր կարծիքը յայտնելու հրաւիրված է. հետեւապէս իրաւունք ունի իւր յարմար դատած ձեւովը յայտնելու:

ԱՅԿԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Առաջ հասկնանք խնդրոյն իրձակը. դուք ու Այլատեան էֆ. կ'ըսէք թէ Յանձնախորհրդին ծրագիրը շատ բեռնաւորված է, եւ անոր տեղ նոր ծրագրի մը պէտք կը տեսնէք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես նոր ծրագրի առաջարկութիւն չ'ունիմ, այլ համաձայնութեան առաջարկութիւն:

ԱՅԿԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Ուրեմն կ'ընդունիր որ այս ծրագրին վրայ քննութիւն ըլլայ:

(ԱՅԿԱՏԵԱՆ ԵՒ ՓԱՓԱՋԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Այո՛, այո՛):

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Ես չ'եմ ուզեր թէ եւ ժողովոյ ժամերը գրաւել, բայց այսպիսի ամենամեծ խնդրոյ մը վրայ խօսած ատենս երբ սակաւ ինչ երկարի խօսքս, ներողամտութիւն կը խնդրեմ: Ենորձակալ եւ այն ամեն անձերէն որ Սահմանադրութեան վրայ կը մտածեն, ծրագիր կը խմբագրեն ու կը բերեն ժողովին. ամենքն ալ եթէ այսպէս ընեն անողուտ չ'ըլլար: Բայց ես վերաքննութեան եղանակ մը կ'առաջարկեմ Գիւանին. երկու Սահմանադրութիւն ունինք ձեռքերնիս, երկուքն ալ յօդ-

ուած առ յօդուած սկսինք կարգալ եւ բաղդատել, իւրաքանչիւր որ իր դիտողութիւնն ընէ, արձանագրուի. վերջը այս դիտողութեանց վրայ եթէ հարկ դատուի՝ պէտք եղած սրբադրութիւնն ըլլայ եւ գործը վերջանայ: Արդի ընթացքով անկ լարիւրնիս մը մէջ կը տեսնեմ զմեզ, եւ անհնար է ազատիլ անկէ եթէ իմ առաջարկած սրբադրութեան ընական ընթացքին՝ զոր նաեւ վարժապետներն ալ ի գործ կը գնեն, չը հետեւի ժողովը:

ԱՅԿԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Երեսփոխանք եթէ ընդունայն ժամավաճառ ըլլալ չ'են ուզեր, աւելի շու կ'ընեն որ իրենք իրենց պաշտօնովը դրաւդին եւ թողուն զԱտենապետը իր պաշտօնը կատարելու: Մեր պաշտօնն է ներկայացնել ծրագիրը կարգալ. թէ որ երեսփոխանք ուզեն բաղդատել հին Սահմանադրութիւնը նորին հետ, ոչ ոք կ'արդիւ զիրենք որ ի ձեռնին ունենան զանոնք. կարդան եւ բաղդատեն: Գիւանը իւր պարտքն ու իրաւունքը կը ճանչէ եւ պիտի գործադրէ:

ԻՓԷՔՃԵԱՆ Չ. ԷՖ. — Փողովը Յանձնախորհրդին տեղեկարար էֆ. ին առաջարկութեան համեմատ ասկէ արձալ որոշեց վերաքննութիւնը թաղական մատակարարութեան զլիւսն սկսել. քանի մը նիստի մէջ փորձեր ընել հարկ եղաւ այս եղանակին անգործադրելի ըլլալն հասկնալու համար, եւ այս փորձառութեամբ յետոյ իւր որոշումը ջնջեց եւ ընդհանուր արամադրութեանց վրայ վիճարանի սկսաւ:

Արիչ սխալ մըն ալ ունինք բրած, զոր հասկնալու համար քանի մը նիստ բաւական չ'է, եւ այնքան երկար ատեն ետքը պիտի զգալի ըլլայ, որ ալ ուղղելու ժամն անցած եւ սխալն իր հետեւածքը յառաջ բերած պիտի ըլլայ: Յառաջանոցն ընդհանուր վիճարանութիւն ընելու առաջարկութիւն եղած ատեն, շատերը կ'ընդունէին զայս. հիմա կ'երեւի թէ ժողովն աւելի արամադիր է գործադրութեան մէջ գտված Սահմանադրութիւնը վերաքննելու. նոյնը ես առաջին անգամ շատ կրկնեցի եւ տեսի որ ժողովը արամադիր չ'էր լսելու: Միայն կ'ուզէի զիսնալ թէ այն հրամանը որ Ք. Գանէն եկած է, կը պարտաւորէ ըզմեզ վերաքննելու Սահմանադրութիւնը գործադրելու: Երեսփոխանական ժողովոյ վերանորոգումն առաջ ալ լսած էի թէ Յանձնախորհրդին ծրագիրը վերաքննելու է. ես՝ այս կարծիքին հակառակ էի եւ դիտելի թէ պէտք էր վերաքննութիւնը գործադրութեան չ'ընանին մէջ գտված Սահմանադ-

րութեան վրայ կատարել, որ երբեմն զժողով պարագայով մը զադրած էր:

Ատենապետ էֆ. ընդմիջելով զատենաքանը կ'ազդարարէ թէ այս կէտերուն վրայ խնդիր չըկայ եւ հետեւապէս չը կրնար թոյլ տալ Սահմանադրութեան ընդհանուր վիճարանութեան գուրս նիւթի վրայ խօսելու:

ԻՓԷՔՃԵԱՆ Չ. ԷՖ. — Երբ ինդիք մը այն ինչ ծագելու վրայ է, չ'եմ կրնար երկու անգամ երկուքը չորս կ'ընէ բսելու պէս խօսիլ: Սահմանադրութիւնը 10-11 տարիէ ի վեր կը գործադրուի. եւ անոր ամեն թիւերու թիւաները եւ անգործադրելի կէտերը փորձով տեսված են: Թող փորձառու անձինք իրենց դիտողութիւններն քննեն անոր ընդհանուր արամադրութեանց վրայ եւ անկէ մասնաւոր յօդուածոց անցնինք: Անք գասապարսկած չ'ենք անպատճառ Յանձնախորհրդին ծրագիրը քննելու. շնորհակալ ենք զանի ախտաստիւրօններէն, բայց մեր պարտքն է զայն Սահմանադրութիւնը վերաքննել որ Ք. Գրան կողմէ գործադրութեան մէջ գրված է, եւ անոր թիւերն լրացնել:

ԱՅԿԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Խի՛ղքձեան էֆ. հիմա շատ իրաւաւոր խօսեցաւ. Ազգը Սահմանադրութիւն մ'ունէր, որ պահ մը գաղարման ենթարկվեր եւ Ք. Գուրը Ազգին յանձներ է որ իր տասն եւ մէկ տարվան փորձառութեամբ քննէ զայն: Այդ ինչ որ Խի՛ղքձեան էֆ. կը ցանկայ, նոյնը եղած է արդէն. ժողովը ուղղակի ինք չ'է կատարեր Սահմանադրութեան վերաքննութիւնը, այլ Յանձնախորհրդին մը յանձնել է զայն, որ իւր պաշտօնը կատարելով իւր ծրագիրը բերած ու տեղեկագրովը մէկտեղ ժողովին դիտողութեանը մատուցած է, ինչպէս կ'ըլլայ ամեն նմանօրինակ պարագայից մէջ:

ԱՅԿԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Քօլօլեան էֆ. ի դիտողութեանց պատասխանելու համար խօսք ուղեցի, բայց Իրանը արդէն պէտք եղած պատասխանն իմ կողմէս տուած ըլլալով աւելորդ կը համարեմ կրկնել: Իմ դիտողութիւններս ծրագրին ընդհանուր արամադրութեանց կը վերաբերին եւ ամբողջ ծրագրին փոփոխումը չ'են ենթադրեր. բայց զժողովաբար Երեմիա Արբազանը Քօլօլեան էֆ. ի կարծիքը կ'երկրորդէ: Իսկ Խի՛ղքձեան էֆ. ի առաջարկութեան գալով կ'ըսեմ թէ Սահմանադրութեան նոր ծրագիրը ուրիշ բան չ'է, եթէ ոչ առաջնոյն յար եւ նմանը օրէնսդրական սկզբանց մէջ:

Պատրիարքի պաշտօնը, Երեսփոխանական ժողովոյ էութիւնը եւ ուրիշ այս տեսակ էական կէտերը երկուքին մէջն ալ կան, զիստ որ տարբերութիւնը միայն թաղական մատակարարութեան եւ տեսուչ խորհրդոց մասերուն մէջ է: Նոր ծրագիրը վարչութեան խել մը խոնհալ ճիւղերը, ինչպէս են կտակաց, ելեւ մտից հոգաբարձութիւնները եւն. վերուցեր է, որոնք մինչեւ ցարդ չ'են կրցած կանոնադրապէս կազմել:

ԵՌՄՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Սահմանադրութեան վերաքննութեան եղանակը քանի մ'անգամ փոփոխելէ ետքը՝ որոշեցինք վերջապէս եւ ահա նորէն մի եւ նոյն խնդրոյն կը դառնանք. եւ կ'երեւի թէ մոռցեր ենք մեր ընկիւղը: Ինչպէս կանխաւ որոշված էր, Սահմանադրութեան ընդհանուր արամադրութեանց վրայ վիճարանութիւն բացվեցաւ եւ մէկ քանի առաջարկութիւններ եղան, որոնց մէջ գործադրական մասնաւոր կէտեր ալ կան: Խնդիրը օրինաւորութեան մէջ մտցնելու եւ շիտթութենէ ազատելու համար կ'առաջարկեմ որ, այս խառն առաջարկութեանց մէջէն հիմնական սկզբանց վերաբերեալ կէտերն առանձին հրատարակութեամբ հարգովն երեսփոխանաց, որպէս զի ամենքն ալ վերահասու ըլլան եւ յառաջիկայ նիստին մէջ քըւէի դրովելով անոնց վրայ որոշում մը տուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ շիտթութենէն Գիււանը պիտի ազատէ ըզձեզ, միայն կ'ըստասէ որ զխտոզութիւնները վերջանան:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Քսան վայրկեան կայ տեսանին գոցվելուն, կը խնդրեմ որ յուզված խնդիրն առ կտա մնայ եւ այս մնացորդ ժամանակը ինձի տրվի որ, ուրիշ խնդրոյ մը վրայ խօսիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սահմանադրութեան վերաքննութեան վերաբերեալ այս խնդիրը արդէն իր վախճանին մօտեցած ատեն, կ'աղաչեմ Նախագահ Սրբազանը որ անկէ ետքի պահէ իր այն խօսքն որ ուրիշ խնդրոյ մը կը վերաբերի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Իփէքճեան էֆ.ի առաջարկութիւնը երկրորդելով կ'ըսեմ որ ժողովը պէտք է միայն գործադրութեան մէջ գտված Սահմանադրութիւնը վերաքննութեան ենթարկէ, եւ ուրիշ որ եւ է ծրագրի պէտք չը կայ: ուրիշ խնդիր է թէ բոլոր երեսփոխաններն ալ իրաւունք ունին իրենց զխտոզութիւններն ընելու:

ԻՓԷՔՃԵԱՆ Զ. ԷՖ. — Կը տեսնեմ որ Սյ-

վտեան էֆ. իմ զխտոզութիւններս տարբեր կերպով ըմբռնեմ է, եւ թերեւս ուրիշներն ալ իրեն պէս հասկցած ըլլան: Ես ընաւ ըսել չ'ուզեցի թէ Սահմանադրութեան մէջ Պատրիարքի պաշտօնը, Ընդհանուր ժողովոյ էութիւնը եւ այլն կան, իսկ Յանձնախորհրդի ծրագրին մէջ չը կան: իմ ընտանածս այն է թէ մենք պարտաւոր ենք դժբանդ պարագայի մը երեւան եկած ծրագիր մը իբր օրէնք ընդունելու եւ անպատճառ զայն քննելու, քանի որ բուն Սահմանադրութիւնը սկսած ենք գործադրել Բ. Գրան հրամանին համեմատ, քանի որ Երեսփոխանական ժողովը վերանորոգված է իբր հետեւութիւն Սահմանադրութեան գործադրութեանը: Երեսփոխանական ժողովը իբր նպատակէն հեռացած կ'ըլլայ ուրիշ ծրագրիներու քննութեան պարագայով:

ԲՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Այս պարագան պահ մ'առաջ բացատրեցի եւ շնորհակալ եմ Ատենապետ էֆ.էն որ քաջ հաստատեց խօսքս: Փափագեան էֆ. կ'ըսէ որ սխալ ըմբռնած եմ խընդիրը, եւ թէ ամեն երեսփոխան իրաւունք ունի մէկ մէկ ծրագիր բերելու: ուրեմն ուրիշ մ'ալ անշուշտ իրաւունք ունի անընդունելի է ըսելու: Այվատեան էֆ. կը բացատրէ թէ իբր բերածը Սահմանադրութեան ծրագիր մը չ'է, այլ անոր արամադրութեանց վերաբերեալ զխտոզութիւններ: Իսկ ես կ'ըսեմ թէ ծրագիր մը կայ արդէն պաշտօնապէս պատրաստված, եւ պէտք է զայն քննել հիմնական սկզբունքներէն սկսելով, որով կը զիբանայ վերաքննութեան գործը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սահմանադրութեան վրայ ընդհանուր կերպով եզրած զխտոզութիւնները կը ներկայացնեն ժողովին: Փափագեան եւ Այվատեան էֆ.ները միաձայն կ'ըսեն թէ ծրագրին մէջ աւերորդ մասեր կան, որոնք ետքը Ընդհ. ժողովը ինքն իր մէջ կրնայ անօրինել: Աստի կ'ուզեն այս տեսակ խել մը յօդուածները գուրս ձգել Բ. Գրան ներկայանալի ծրագրին մէջէն, որպէս զի պաշտօնական ձեւերու հարկ չը մնայ: Կ'ուզեն վերջապէս որ այժմու ծրագիրը բաղկանայ միայն հիմնական սկզբունքներէ եւ մէկ քանի ընդհանուր արամադրութիւններէ: Հիմա Ընդհանուր ժողովը թէ եւ հաւանի այս զխտոզութեան կրնայ սա երկու բանին մէկը ընդունիլ. կամ ծրագիրը պահելով յօդուածոց քննութեանն ատեն վերցնել աւելորդ գտված յօդուածները, կամ ծրագիրը փոխել տալ: Ասկէ դատ ուրիշ զխտոզութիւն

մը չը ներկայացաւ. ասոնք ժողովին որոշմանը կը յանձնեմ եւ քըւէի կը դնեմ:

ԻՓԷՔՃԵԱՆ Զ. ԷՖ. — Ես ալ զխտոզութիւն մ'ունէի, որ տարբեր է միւսէն, եւ որոյ վրայ բան մը չ'ըսիք: **ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Այ թէ իրաւունք չ'ունիմ ձեր զխտոզութեան վրայ խօսելու, այլ պէտք էր նաեւ արդելու խօսված ատեն, վասն զի ժողովին որոշման կը հակառակէր: Պահ մ'առաջ ըսի թէ Ընդհ. ժողովը Յանձնախումբ մը զրեր է որ Սահմանադրութիւնը վերաքննէ, սրբագրէ եւ նոր ծրագիր մը շինելով Ընդհ. ժողովին ներկայացնէ. այս աշխատութիւնը այսօր կատարված է. կ'ուզէք որ հիմա ժողովը սխալե՞ր եմ ըսէ, եւ իր որոշումը չը ճանչէ՞, մինչդեռ անխախտելի որոշում մը եթէ կայ այս է, եւ զի արդէն գործադրութեան ալ ըսկըսած է:

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Կը հարցնեմ թէ Վերաքննիչ Յանձնախումբը այդ ծրագիրը յօրինած ատեն, Սահմանադրութիւնը գործադրութեան մէջ էր թէ ոչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիււանը ազգային տեղեկութեանց աղբիւր չ'է, եւ պաշտօն չ'ունի զանոնք ընձեռելու:

ԱՊՐՕ Ս. ԷՖ. Արովետեւ Գիււանը Յանձնախումբին ծրագիրը կը պաշտպանէ, պարտաւորեցայ այս հարցումը ընելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիււանը ինչ որ կը պաշտպանէ ժողովին որոշումն է, եւ զայն յարգել տալ կ'ուզէ միայն. զի Յանձնախումբը ժողովին որոշմամբն ու յանձնարարութեամբը աշխատած ու պատրաստած է իր ծրագիրը, որոյ ներկայացման ատեն շնորհակալութեան իսկ քըւէ առաջարկված է:

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Սահմանադրութիւնը անգործադրելի է ըսողները կը տեսնեն որ այսօր գործադրութեան մէջ կը գտվի, հետեւաբար պէտք է անոր վրայ սրբագրութիւն ըլլայ, մասնաւոր Սահմանադրութեան վերաքննութեան վերջին յօդուածին արամադրութեան համեմատ չ'է թէ ամբողջ Սահմանադրութիւնը մէկ կողմ դրվելով նոր ծրագիր մը պիտի շինվի, այլ միայն այն արամադրութիւնները պիտի սրբագրվին երբ անոնց փոփոխութիւնը փորձառութեամբ հարկաւոր դատվի:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Ես խօսք ուզեցի թի մ'առաջ կարեւոր խնդրոյ մը վրայ, մի թէ մոռցվեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յանցանքը իմա չ'է Սրբազան Հայր, նոր խնդիր մը երեւան կը հանն

եւ թոյլ չ'են տար որ ժողովն իւր քըւէն տայ բուն խնդրոյն վրայ՝ որոյ վրայ վէճն սպառեալ է:

ԻՕԶԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ընդհ. ժողովոյ առջեւ ներկայացեալ խնդիրը Սահմանադրութեան ընդհանուր արամադրութեանց կը վերաբերի, եւ չ'է թէ վերաքննութեան եղանակին եւ անոր ծագմանը: Իփէքճեան էֆ. ճիշդ այս օտարտախնդիրը յարոց խնդրոց կարգէն շեղելով, եւ զոր Ապրօ էֆ. կը պաշտպանէ:

Այս պահուս Իփէքճեան էֆ. զԱտենաբանն ընդմիջելով կը բողոքէ թէ՛ ինք նախ քան զանի խօսք ուղած է եւ թէ Գիււանը չ'է առած զայն իրեն:

Ատենապետ էֆ. մէկ քանի անգամ կ'աղաբարէ եւ կ'ըսէ թէ ինք կարգով խօսք տուած է իւրաքանչիւր խօսք ուղղներուն. Իփէքճեան էֆ. խստիւ կը բողոքէ. դարձեալ եւ կը շփոթէ վիճարանութիւնը:

Ատենապետ էֆ. ի կարգ կը հրաւիրէ զանի եւ լուծութիւնը վերահաստատվի:

ԻՕԶԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — (Շարունակելով) Ատենաբաններն այս խնդիրը յարուցնելով, կ'ըմբռնեմ թէ՛ իրաւանց կէտ մը կ'ուզեն չօչափել եւ անցեալին դառնալ, բայց հարկ է գիտնան որ այս ծրագիրը բերօղ Յանձնախումբը բուն իսկ Ընդհ. ժողովոյ կողմէն եւ անոր քըւէն ընտրեալ մարմին մըն է. երբ ասկէ առաջ Բ. Գրան Յանձնաժողովին շինած ծրագիրն Ազգին յանձնվեցաւ եւ ըսվեցաւ որ նոյնը Բ. Գրան վերադառնայ վաւերացման համար, Ընդհ. ժողովն ուղեց որ իր մէջէն կարգեալ Յանձնախորհրդի մը յանձնէ զայն, որ քննէ եւ նոր ծրագիր մը բերէ. եւ ահա այս է եկած ձեռքագիրը: Գանք ընդհանուր արամադրութեանց վիճարանութեանը. առաջարկութիւն մը կայ Սահմանադրութիւնը համառօտելու. նոյն իսկ Վերաքննիչ Յանձնախումբը ամենէն առաջ այդ նպատակն ունէր եւ կը փափաքէր որ միայն Սահմանադրութեան օրինական մասը Բ. Գրան ներկայանայ, եւ գործնական մասը Ընդհ. ժողովոյ հեղինակութեան վերապահվի իւր ընդունած վաղեմի արտօնութեանց համաձայն, սակայն չը կրցաւ յաջողել եւ զայն իր նախկին վիճակին մէջ պահել պարտաւորեցաւ: Արդ՝ եթէ Ընդհ. ժողովը կարողանայ զայն ընել, Յանձնախումբը բնաւ դժգոհելու պատճառ մը չ'ունի եւ շնորհակալ իսկ կ'ըլլայ իր

փափաքը ընդհ. ժողովոյ ձեռքը իրագործված տեսնելով, Բաց ասկէ՝ Յանձնախումբը հին Աստուածաբանութիւնը յօդուած առ յօդուած քննելով սրբազան զայն, ինչպէս կրնան վկայել իւր աստուածաբանութիւնը, եւ երբ կարգը խմբադրութեան եկաւ, եղած սրբազանութիւնները հարկ զրին խմբադրութեան ձեռք փոխել, եւ մի եւ նոյն բանը պիտի ընէ եթէ ընդհ. ժողովը ուրիշ Յանձնախումբ մ'ալ կարգէ, քիչ կամ շատ առաւելութեամբ:

(ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — ձիշգ են ըսվածները) : Այս դիտողութիւններն ընկէսեաքը կ'առաջարկեմ որ դոյզի ընդհ. սրբազանութեանց վրայ բացված վիճարանութիւնը, եւ այնուհետեւ քննութիւնը հիմնական սկզբանց գլխէն սկսելով շարունակաբար յառաջ ելլի մանրէն շատ:

ԻՓԷՔՃԵԱՆ ԷՖ. — Ատենապետ էֆ. պահ մ'առաջ ըսաւ թէ ընդհ. ժողովը չը կրնար իւր որոշումէն դառնալ. սակայն ինք լաւ կը յիշէ որ ասկէ առաջ ժողովը թաղական մատակարարութեան գլուխը վիճարանութեան ենթարկած էր եւ յետոյ իւր որոշումը փոխելով ընդհ. սրբազանութեանց վրայ վիճարանի ըսկրաւ, եւ այն ատեն ինքն Ատենապետ էֆ. եղած փոփոխութեանը համաձայն ընդունեց զայն եւ խնդրոյն յաջողութիւնը աւետեց, Իրայ այս վիճակին առջեւ կը հերքվի Գրեանին խօսքը: Ատենապետ էֆ. Յանձնախումբին ծրագրին վրայ խօսած ատեն կ'ըսէ նաեւ թէ՛ ժողովը ոչ միայն որոշած է զայն, այլ եւ գործադրութեան գրած. է՛ւմ կրնար ըմբռնել թէ՛ գործադրութիւն ինչ կը նշանակէ, միթէ՛ ծրագիր մը չիկը գործադրութիւն ըսել է: Յանձնախումբին անգամները որքան ալ սնդին, ընդհ. ժողովը որքան ալ սրբազան ըլլայ ներկայացված ծրագրին վրայ քննութիւն ընելու, ես մինչեւ վերջը պարտ կը համարեմ ինձ ըսել թէ՛ այս անկարելի է, եւ կ'ըսեմ զայն առանց Օգոստէն էֆ. ի կնիքագրած դիտաւորութիւնն ունենալու եւ պատուակաւոր խօսքեր ընելու:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Կ'երեւի թէ սխալ հասկացողութիւն մը կայ, եւ զեւ եւս պիտի տեսէ այն, կ'ուզեմ եւ այս խնդրոյն վրայ իրաւախօս ընել զամենքը: Ասկէ քանի մը տարի առաջ ճարտարին մէկը ըսաւ Հայոց Ազգին «ձեր Աստուածաբանութեան անիւր քառակուսի է եւ չը քայլեր, գնացէք տաշեցէք զայն» կը

յիշէք թէ զայս ըսողն ով էր. նա խաբեց ըզմեզ ու գնաց. փասն զի կը տեսնեմ թէ Հայոց Աստուածաբանութիւնը քառակուսի է՛ եւ կըրնայ քայլել, ինչպէս Ապրո էֆ. ալ ըսաւ. այլ մեր մտքերն են քառակուսի: Ընդհ. ժողովը Մովսէս մարգարէի նման ժողովրդեան օրէնք տալու համար Արեւիկայի գլուխն ելած, այնքան կ'ուշանայ հոն որ վերջապէս ժողովուրդը սպասելէ ձանձրացած հորթ պիտի պաշտէ: Անհար է ազգի մը համար բոլորովին կատարեալ օրէնք մը չիկը, այլ կարելի եղածին չափ անոր պիտոյցի եւ ժամանակին պահանջմանց յարմարցնելու է զայն: Ամանք Յանձնախումբին ծրագիրը եւ ոմանք բուն իսկ Աստուածաբանութիւնը պէտք է քննել կ'ըսեն եւ երկուստեք կը փաստարանեն. բայց է՛ւմ գիտելի թէ ինչ արդիւնք կը ծագի այսպիսի խնդիր մը յուզելէ: Յանձնախումբը ի պաշտօնէ՛ ծրագիր մը չիկը է, անբնական է զայն իսպառ մերժել. կրնանք երկուքն ալ իրարու հետ բաղդատել եւ մեր դիտողութիւններն ընել ու վիճարանել, ո՞վ կ'արդիւն ըզմեզ: Աստուածաբանութեան չը գործադրվելուն պատճառն ուրիշ տեղ է, զայն բնատել պէտք է: Անոր հաստատութեան ի վերահսկին քարընդոտ մը կայ անոր առջեւ զըրված. դու որքան կ'ուզես օրէնք խմբագրել, քարը յիւր տեղն է եւ կ'արդիւն ամեն յառաջագին մտքիւն: Եթէ հարիւր նիստ ալ շարունակվին այսպէս ընդհ. ժողովոյ օրէնսդրական այդ վիճարանութիւնները՝ այդ քարը չը պիտի փշրի. եւ իմ պարտքս է անոր ինչ ըլլալը ձեզի գիտցնել եւ զայն բառնալու համար ձեր միտքան աջակցութիւնը խնդրել: Գիտէ՛ք ո՞րն է այդ, օրինակաւ կ'ուզեմ ճանչցնել զայն: Պատրիարքարանէն հարիւր կանգուն անդին ստորերկեայ խոնար ու մթին նկուղի մը մէջ բնակող պառաւ մը կայ, այս սղորմելի էակը 700 դուրուշ առնելիք ունի Ազգէն, լալազին անոր հատուցումը կը խնդրէ, եւ անտուկը զայն վճարելու կարծի է: Երբ ընդհ. ժողովը գումարված՝ Ազգին գործերը անօրինելու կ'ըզբաղի, պարտատէր մը կ'ուզայ եւ ժողովին բանակցութիւններն ընդմիջելով խօսք կ'ուզէ իր առնելիքը Ազգէն պահանջելով. եւ կ'իմանամ որ այս պարտատէրները կը սրբազանութիւն եղեր որ մը խմբովին ընդհ. ժողովոյ աստեանը խուժելու: Այս գէտքը հիւանդութեանս մէջ իմացայ եւ վիճակս աւելի սկսաւ ծանրանալ: Անա՛ քարը, անա՛ արդիւնք՝ օրինաց գործադրութեան եւ ազգա-

յին յառաջագինութեան առջեւ: Եթէ ընդհանուր Ազգին համար սնանկութիւն մը կայ, լաւ կ'ըլլայ որ հրատարակվի: Ընդհ. ժողովը գաւառական հարստահարութեանց բարձման համար քննելի Յանձնախումբ մը գրաւ. բայց նոյն իսկ մինք կնք որ կը հարստահարենք գաւառացի ազգայինները՝ անոնց առնելիքը չը վճարելով:

Այցեալ տարի մարտ 23ին Մայր Եկեղեցւոյ բեմին վրայէն ժողովրդեան հետ խօսեցայ ազգային պարտուց խնդրոյն վրայ, եւ լսի թէ՛ Հայոց Ազգը այս պարտքը պիտի տայ. ժողովուրդը զգածեալ արձագանգ տուաւ ձայնիս, հետեւաբար ամենէն առաջ պանդուխտ ազգայիններէն սկսելով նուէր հաւաքելու ձեռնարկեցի, եւ թէ՛ ասկէ գոյացած հասցեով եւ թէ՛ Եւրոպայէ տրոց արդիւնքով ազգային ստիպողական պարտքերէն մէկ քանին վճարեցի. բայց ինչու յառաջ չը տարի, փասն զի քանի մը զժողովուրդէ պէտքեր, արդիւնքներ, ստիպեցին զիս ձեռնկալի ըլլալ: Իհրայի աղէտակի հրդեհը, ներկայ տնարկու պատերազմին աւերմունքը, գորոց ազգեցութիւնը մեր Ազգն ալ կրեց: Այս պատճառներէն զատ լսեցի նաեւ որ կ'ըսէին թէ՛ Երիման ինքնագլուխ գործ տեսնելու եղբ է եւ իր ձեռնարկութիւնը օրինաւորութեան պայմաններէ զուրկ է: Անա գործը այս պարտքանկուն առջեւ երեսի վրայ մնաց: Արդ՝ ընդհ. ժողովին կը դիմեմ եւ կը հարցընեմ թէ՛ այս պարտքը Ազգին է թէ՛ ոչ. եւ եթէ Ազգինն է՝ կ'առաջարկեմ որ ժողովն անոր վճարումը որոշէ եւ յանձնէ Պատրիարքին որ Ազգ, Ապրիլութեան աջակցութեամբ այս պարտուց բարձմանը ձեռնարկէ, արժան եւ յարմար գառած միջոցն ի գործ գնելով: Եթէ այս քարը չը վերցվի, ոչ Պատրիարքը եւ ոչ ալ ժողովը կրնայ գործ մը տեսնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախագահ՝ Սրբազանը առաջարկութիւն մը բերաւ ժողովին, այն է՝ որոշել թէ՛ այդ պարտքը Ազգինն է եւ վրձարվելու է: Գրեանը թէ՛ եւ բացված խնդրէն դուրս այլ Սրբազան պատրիարքին կողմէն պալուն համար, չը կրնար այդ առաջարկութիւնը բարձի թողի ընել եւ ժողովին կամքը չը հարցնել:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄՍՏ. ԷՖ. — Չեմ կրնար մըտածել թէ՛ նախագահ՝ Սրբազանը չը ճանչեր օրէնսդիր ժողովոյ բնութիւնը եւ Ապրիլութեան պաշտօնը: Այն ամեն խօսքերը որ այս պարտուց խնդրոյն առիթ ըսվեցան՝ յատենի վարչական Խորհուրդին պէտք էր ըսվէին, հոն էր անոնց տեղը: Քաղաքական ժողովին պաշտօնըն է սուրբ հաւաքել, կեդրոնական սնտուկին պարտքերը վճարել, ազգային ծախքերը անտեսել եւն Ազգային սնտուկին վճարելի ուղղակի եւ անուղղակի տուրքեր սահմանված են, երեսփոխանական ընտրողներէն 75 զըշ. կ'առնվի իրր թերահալ, եւ ընտրող չ'եղող չ'անու տէր ազգայիններէն 25 զըշ. եւ իրաւունք ունի ըսելու որ՝ մի թէ՛ այս տուրքը ուղղեցաւ ինէ ու

չը վճարեցի, նոյնը ինձի պէս ամեն ազգային անհատ:

Եթէ այս տուրքերը անբաւական են, եթէ նոր օրէնք մը գնելու հարկ կայ, այն ատեն պէտք է ընդհ. ժողովոյ բերել խնդիրը, ապա թէ՛ ոչ՝ հարկ է արդէն գանձած օրէնքը գործադրել, սուրբ հաւաքել եւ վճարքները կատարել:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Ես 75 դուրուշի տրոց վրայ խնդիր չը յարուցի. այդ տուրքը արդէն կը հաւաքվի եւ վարչական ծախուց համար ի գործ կ'առնվի: Ամ առաջարկութիւնս հին պարտուց կը վերաբերի, որոյ բարձման որոշումը պէտք է ընդհ. ժողովէն բղխի, որպէս զի կարելի ըլլայ դիւրութեամբ գործադրել այս նպատակին ծառայող միջոցը, եւ բուժել գացթակղեալ մտքերը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ խնդիր մը օրինաւորութեամբ չը ներկայանայ ժողովին, անուձեղի կը մնայ. եթէ Ազգը պարտք ունի եւ անմիջապէս վճարելու հարկ կայ, պէտք է որ նախագահ՝ Սրբազանը իւր գործադիր ժողովին հետ խորհրդակցի թէ՛ կրնա՞յ այս պարտուց վճարումը զեւ եւս երկարաձգվի. եւ եթէ չը կրնար, անոր վճարման համար պէտք եղածն ի գործ գնել, եւ այս պարտքաներուն վրայ խորհրդակցել ետք՝ օրինաւոր առաջարկութիւն մը պէտք է բերել ընդհ. ժողովին, որպէս զի կարելի ըլլայ խնդրոյն ամեն պարագաներուն վերահատուկեամբ լուծել զայն:

ԵՌԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Քաղաքական ժողովը Բարձրաշնորհ Սրբազանին առաջարկութեան վրայ պարտ կը համարի յայտնել թէ՛ ինք պատրաստ է ժողովին առնելիքը մը բերել, երբ հին պարտուց խնդրին օրվան կարգն անցնի:

ԱՇՎԱՃԵԱՆ Տ. ԷՖ. — Ազգային հին պարտքը բառնալու համար Սրբազան Նախագահը միայն ժողովին հաւանութիւնը կ'ուզէ. ինք պէտք եղած միջոցն ի գործ գնելով Ազգը պիտի ազատէ այս բեռէն:

ԵՌԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Իրաւ է որ Սրբազան Պատրիարք շօր առաջարկութիւնն այս է. բայց օրվիտես Գրեանը դիտողութիւն ըրաւ թէ՛ խնդիրը օրինաւորապէս պէտք է ներկայանայ, հետեւապէս Քաղ. ժողովը՝ որ արդէն իւր ուշը գործուցած է այս խնդրոյն վրայ, խօստացաւ առնելիքը մը ներկայացնել:

Ժողովը կ'որոշէ ազգ. հին պարտուց խնդրին օրվան կարգն անցնել միւս խնդիրներէն նախագատելով, եւ յաջորդ նիստին մէջ քննել զայն: Այս որոշումէն ետքը Ատենապետ էֆ. ժողովը կը հրաւիրէ կրկին վերաքննութեան խնդրոյն գառնալու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գրեանը կը հարցնէ ժողովին թէ՛ ընդհանուր վիճարանութիւնը բաւական համարելով կ'ուզէ՞ մասնաւոր յօդուածոց քննութեան մանել թէ՛ ոչ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ի՞նչ եղաւ ընդհանուր վիճարանութեան արդիւնքը որ ժողովը մասնաւոր յօդուածոց քննութեան անցնի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը քրէի գնել կ'ուզեմ սա իմաստով ընդհանուր վիճարանութեանը գոցված է եւ հա՞րկ է անցնիլ մասնաւոր յօդուածոց քննութեան թէ ոչ : Այս կերպը ոչ ձեր դիտողութիւնները կը հերքէ եւ ոչ կը նպաստաւորէ :

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Խնդիրը խիստ կարեւոր է եւ պէտք է յաջորդ նիստին քրէի գնել , մասնաւոր թէ ո՞րն է քննվելի Յանձնադրութիւնը : այս ալ որոշվելու համար զեռ վիճարանութեան կը կարօտի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վերաքննիչ Յանձնախումբը նոր ծրագիր մը ներկայացուցած է եւ այս միայն քննութեան ենթարկված է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Արդէն քննութիւնը ծրագրին վրայ սկսված է , բայց որովհետեւ Ապրօ եւ Իփէքճեան էֆ. ներու դիտողութիւնը բաւական կարեւորութիւն գտաւ , կ'առաջարկեմ ուրեմն որ հոս բերվին Յանձնախումբին ատենադրութիւնները որք բուն իսկ Յանձնադրութեան քննութեան մանրամասնութիւնը կը պարունակեն եղեր , ինչպէս ըսվեցաւ :

Կը յիշեցնեմ որ ասկէ առաջ անգամ մ'ալ վերաքննութեան եղանակին վրայ քրէ մը տուինք բայց վերջէն ետ առինք . կարելի է որ այսօրվան տայիք քրէնիս ալ նոյն վիճակին հանդիպի , քանի որ նպատակնս որոշ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ամենքնիդ ալ կրնաք ձեր քով ունեցած Յանձնադրութիւնը , հին , նոր , տպագրեալ եւ ձեռագիր , մինչեւ իսկ Եւրոպական ազգաց սահմանադրութիւնները բերելու եւ բաղդատութիւններ ընելով վիճարանելու . բայց Գիւանը միակ պարտք մ'ունի , այն է՝ Ազգային ժողովին խմբագրել տուած ծրագրին վրայ վիճարանութիւն ընել տալ : Իսկ եթէ ժողովը բոլորովին այս ծրագիրը կը մերժէ , այդ ուրիշ խնդիր , իւր կամքը թող յայտնէ որոշակի : Կարձեալ եթէ ժողովը չ'ուզէր այսօր քրէ տալ , յաջորդ նիստին կը թողունք զայն՝ վիճարանութիւնը շարունակելու համար : բայց ցաւօք կ'ըսեմ որ վիճարանութեան այս ընթացքով սր եւ է խնդիր խիստ շատ պիտի հոգնեցընէ մեզ , եւ պատճառը այն է որ , տակաւին չը վարժեցանք սահմանադրական գործողութեանց : Ինչո՞ւ է որ մեր մէջ որ եւ է խնդրոյ վրայ , նաեւ փոքրիկ խնդրոյ մը վրայ վիճարանութիւնը յանձնուս կ'երկարաձգի . վասն զի ամենքս ալ անպատրաստ կ'ուզանք հոս , եւ ոչ մէկերնիս առաջուց մտածած կ'ըլլանք օրվան կարգի խնդրոյ վրայ . առաջուց չը գիտենք ինչ լսելիքնիս եւ ոչ ի՞նչ ընթացք պիտի բռնենք . լոյսը հոս կը ծագի մեր մըտքին մէջ եւ լոյսը ծագելուն պէս անմիջապէս խօսք կ'ուզենք , քիչ մը ետքը նորէն խօսք կ'ուզենք եւ վերջապէս քանի անգամ որ մըտքերնիս զաղափար մը ծնի , այնքան անգամ խօսք կ'ու-

զենք ու ասանկ ամենքնիս ալ զատ զատ մի եւ նոյն նիւթի վրայ եւ շատ անգամ մի եւ նոյն կարծիքն ունենալով կը խօսինք . ասանկով հարկաւ խօսքին վերջը չը դար : Եւրոպայի ժողովներուն մէջ այս կերպ չ'են վարվիր ժողովականք : Նոյն ժողովականք զեռ եւս ժողովին չ'եկած՝ յուզելի խնդրոյն վրայ իրենց կարծիքը եւ զայն պաշտպանելու եղանակը կը պատրաստեն , ամեն խնդիր երկու կողմ կ'ունենայ անշուշտ հակառակորդ եւ պաշտպան . այս մասերը կը զատվին իրարմէ , զատ զատ կը ժողովուին , իրենց մէջ կ'որոշեն թէ որմնք պիտի խօսին իրենց կարծիքը պաշտպանելու համար : մինչեւ անգամ կ'որոշեն թէ առաջ ո՞վ պիտի խօսի , ետքը ո՞վ . այն կերպով ալ կը գործեն . ասանկով մէկ կարծիք մը պաշտպանելու համար մէկ քանի հոգի միայն կը խօսին եւ մէկ կամ երկու անգամ . միայն թէ իւրաքանչիւր ատենաբան մէկ անգամ խօսք առնելուն բոլոր իր փաստերը յառաջ կը բերէ , զի առաջուց ունի պատրաստած այն փաստերը եւ ոչ թէ մեզի պէս առ ժամին տպաւորութեան ներքեւ կը խօսին : Այս եղանակաւ պէտք է վարվինք մենք ալ . հարկ չ'է որ ամենքս ալ խօսինք . իւրաքանչիւր երեսփոխանի պէտք եղածը այն է որ իր կարծիքը պաշտպանուի . իր կարծիքէն եղողները եթէ խօսեցան , այն բաւ է . հարկ չ'է որ մի եւ նոյն բանը ուրիշ կերպով ըսելու համար ինք ալ խօսի : Ատենապետը ոչ զոք իւրաւունք ունի արգիլելու խօսելէ , բայց խօսողները կրնան իրենք զիրենք արգիլել խօսելէ , երբ աւելորդ դատեն իրենց ըսելիքը :


Այս դիտողութիւնները ներկայացնելով ժողովականաց՝ յոյս ունիմ որ ըստ այնմ վարվելով ասկէ ետքը վիճարանութիւններն աւելի ամփոփ ու արդիւնաւոր ըլլան :

Ժողովականաց կողմէն հաւանութիւն ցոյց կը տրվի Ատենապետ էֆ.ին ըսածներուն : Իսկ բուն խնդրոյն վերջացումը յաջորդ նիստին կը թողվի :

Ատենապետ էֆ. կը յայտնէ թէ Ազգ. երեսփոխաններէն Տէմիրճիպաշեան Յարութիւն եւ Սարուխանեան Յարութիւն էֆ. ներք յաջորդաբար երեք անգամ ժողովէն բացակայ գտված են՝ առանց ճամբորդութեան կամ հիւանդութեան պատճառի . եւ ըստ օրինի հրաժարեալ կը հրատարակէ զանոնք :

Ատենը վերցաւ ժամ 10¹/2ին :

ԱՏԵՆԱՊԵՏ
Գ. ՕՏԵԱՆ
ԱՏԵՆԱԴՊԻՐ
ՌՈՒՍԻՆԵԱՆ



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախվի ի Գիւ. անատան Պատրիարքարանի ի Ղալաթիա ,
ևւ կը դառնի ամեն գրավաճառաց քով և Եկեղեցեաց բանկարները :